

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ**

**ՍՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՍՈՐԻԿ 2017թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	3
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	9
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	Ошибка! Закладка не определена.
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	13
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	14
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	15
3.1. Համայնքի զարգացման տեսլական	15
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	15
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	17
5. ՀՀԶԾ մոնիթորինգ	Ошибка! Закладка не определена.

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

ՀՀ Արագածոտնի մարզի Սորիկ գյուղական համայնքի 2017-21թթ. հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

ՀՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառուցվածքը և մատուցվող ծառայությունները.
- համայնքում առկա վտանգները (ոհսկերը):

Ելնելով այն իրողությունից, որ համայնքը փոքր է իր բնակչության թվաքանակով և ֆինանսական կարողություններով, համայնքի ՏԻՄ-երն ի վիճակի չեն իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով և բոլոր ոլորտներում: Այդ պատճառով սույն ՀՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ոհսկերը), որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի 2017-21թթ. ՀՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և նորրնտիր ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀՀԶԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմինը՝ ՀՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային գործողության մեջ դրված զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀՀԶԾ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀՀԶԾ-ի մշակման չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների, կարողությունների ու ռեսուրսների վերլուծումը և գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀՀԶԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈԻԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀՀԶԾ-ի 2-րդ բաժնում սահմանվում են համայնքի իրավիճակի նկարագրությունը՝

1. Հայմայնքի ընդհանուր նկարագրությունը
2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը
3. Համայնքում իրականացվող « ծարգրերը
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները
5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ
ենթաբաժիններով:

ՀՀԶԾ-ի 3-րդ բաժնում ներկայացվում են նպատակների սահմանում և գործողությունների պլանավորումը

1. **Համայնքի զարգացման տեսլականը**
2. **Համայնքի զարգացման անմիջական նպատակները**
ենթաբաժիններով

ՀՀԶԾ-ի 4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք չորս տարիների եկամտային ցուցանիշները:

ՀՀԶԾ-ի 5-րդ բաժնում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀՀԶԾ-ի մոնիթորինգի ծրագիրը, ենթարկվող ցուցանիշները ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը և տեղեկատվության աղբյուրները:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Սորիկ գյուղը հիմնադրվել է 1870-ական թվականներին: Գյուղի բնակիչները հիմնականում եզդիներ են:

Գյուղը գտնվում է Արտին լեռան ստորոտում, ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից հիմնականում տուժում են գյուղատնտեսական աշխատանքները:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 15,36կմ², հեռավորությունը մարզկենտրոնից՝ 62կմ, տարածաշրջանային կենտրոնից՝ 25 կմ: Համայնքն իր վարչական տարածքով սահմանակից է Հացաշեն, Ցամքասար, Սուսեր, Հակո և Կանչ գյուղական համայնքներին:

Համայնքի բնակչության թիվը կազմում է 220 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 128 և կանայք՝ 92: Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝

- 0-6 տարեկան -17 մարդ
- 7-17 տարեկան – 67 մարդ
- 18-63 տարեկան – 93 մարդ
- 64 և ավելի տարեկան – 43 մարդ
- կենսաթոշակառուների թիվը – 52 , այդ թվում տարիքային և աշխատանքային թոշակառուներ՝ 52 մարդ, մանկուց հաշմանդամներ՝ 0 մարդ
- հաշմանդամներ - 20 մարդ
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 0 մարդ
- աշխատունակներ – 67 մարդ
- զբաղվածներ –11 մարդ
- գործազուրկներ –չգրանցված՝ 56 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 72
- ընտանիքների թիվը - 152
- ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 2, այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը – 2:

2015թ. հուլիսին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել է համայնքի ավագանին՝ բաղկացած 6 անդամներից: 2016թվականի սեպտեմբերին ընտրվել է համայնքի ղեկավարը, որը կազմավորել է համայնքի աշխատակազմը՝ բաղկացած 7 աշխատակիցներից:

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

➤ **ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

2015թ. մայիսին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել է համայնքի ավագանին՝ բաղկացած 6 անդամներից: 2016 թվականի սեպտեմբերին վերընտրվել է համայնքի ղեկավարը, որը կազմավորել է համայնքի աշխատակազմը՝ բաղկացած 7 աշխատակիցներից:

- *Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է - 5389500*
- *Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը 26%,*

➤ **ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ**

Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ: Ներկայումս համայնքի սեփականություն համարվող գույքն ունի հետևյալ ցանկն ու վիճակը (աղյուսակ 1)՝

- ջրամատակարարման ներհամայնքային համակարգ՝ խմելու ջրի ջրատար և տնտեսական ջրի ջրատար, որոնք ունեն ընթացիկ վերանորոգման կարիք,
- ներհամայնքային նշանակության փողոցներ և ճանապարհներ, որոնք ունեն բարեկարգման և/կամ ասֆալտապատման կարիք,
- գերեզմանադաշտ, այն ունեն ցանկապատման կարիք,
- ավտոպարկ, որը շահագործվել է խորհրդային տարիներին, այժմ անմխիթար վիճակում է,
- ավտոմեքենա ԳԱԶ 52, ԴՏ տրակտոր որոնք գտնվում են անսարք վիճակում:

➤ **ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համայնքում չկան ոչ համայնքային ենթակայության կազմակերպություններ

➤ **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր (գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն):

Համայնքի բնակչությունը խմելու ջուրը ստանում է ընդամենը մեկ ծորակից: Խմելու ջրով ապահովված չի նաև համայնքի դպրոցը:

Համայնքն ապահովված չէ նաև տնտեսական ջրով,

Համայնքում աղբահանությունն իրականացվում է մասնակիորեն՝ ամիսը մեկ անգամ, համայնքի սուղ միջոցներով: Համայնքը չունի աղբատար մեքենա, առանձին հատկացված աղբավայր, որն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի մաքրության, գեղատեսիլ բնության վրա:

Համայնքում կան 1 գերեզմանատուն, որը ցանկապատված չի, որի պատճառով անասուններն անարգել մուտք են գործում այդ գերեզմանատների տարածքներ՝ առաջացնելով բնակչության արդարացի դժգոհությունը:

> ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում բազմաբնակարան բնակելի շենքեր չկան, իսկ բնակելի առանձնատների քանակը 57 է, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 142500 քմ: Առանձնատների մեծ մասը վերանորոգման կարիք ունի, իսկ նորաբաժան ընտանիքների համար անհրաժեշտ են նոր առանձնատներ: Սակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ համարյա չեն կառուցվում:

> ՀՈՂ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1536.76 հա, այդ թվում՝

- գյուղատնտեսական նշանակության հողեր – 1460,04 հա,
- բնակելի ֆոնդի հողեր – 70,94 հա,
- բնապահպանական նշանակության հողեր – 1,04 հա,
- անտառային և ջրային ֆոնդերի հողեր – 3,98 հա,
- արդյունաբերական նշանակության հողեր – 0,23 հա,
- էներգետիկայի ենթակառուցվածքների հողեր – 0,53 հա:

1991թ. հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհմանը մասնակցել են համայնքի բոլոր 72 տնային տնտեսությունների 152 ընտանիքները: Համայնքի սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է 3,00 հա, այդ թվում 3.00 հա-ը՝ վարելահող, տնամերձի չափը կազմել է 0.25:

Համայնքի սեփականություն համարվող հողերը կազմում են 1047,14 հա, որոնցից 54.91 հա վարելահողերը (որոնցից 10 հա տրվել է համայնքի բնակչությանը վարձակալության 25 տարով) և 847.61 հա արոտավայրերը:

> ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում, այդ պատճառով համայնքի վարելահողերն աստիճանաբար վերածվում են խոտհարքների կամ բնակչությունն անասնակերի մի մասը ստիպված է լինում գնել հարևան համայնքներից:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 418, այդ թվում կով՝ 200, իսկ մանր եղջերավոր անասունների քանակը՝ 735, այդ թվում ոչխար՝ 735, այծ՝ 83: Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև որոշ քանակության թռչուններ, առավելապես՝ հավեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքում անասնապահությամբ և թռչնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու:

Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում, մանավանդ որ ընդհատվել է համայնքի ավտոբուսային հաղորդակցությունը մարզկենտրոն Աշտարակի հետ:

> ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղբավայր չունենալը մեծապես վնասում է բնությանը: Համայնքի տնային տնտեսություններն իրենց արտադրած կենցաղային աղբն անթույլատրելիորեն թափում են այնտեղ, որտեղ հարմար են գտնում: Այդ ուղղությամբ պետք է լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ զերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից: Համայնքն իր ուժերով ի վիճակի չէ լուծելու աղբավայրի հարցը և աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպումը, այդ ուղղությամբ անհրաժեշտ է ծավալել միջհամայնքային համագործակցություն տարածաշրջանի այլ համայնքների հետ:

> ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 9 կմ, որից մայրուղուց մինչև գյուղ 3 կմ ճանապարհը գտնվում է անմխիթար վիճակում: Մնացած 6 կմ մասը կազմում է ներհամայնքային փողոցները, որոնք կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման: Ներհամայնքային ճանապարհները և փողոցները չունեն ջրահեռացման հեղեղատներ, արտաքին (գիշերային) լուսավորության համակարգ:

Ներկայումս Չնայած տրանսպորտային առկա դժվարություններին համայնքի բնակչությունը հիմնականում օգտվում է Թալին քաղաքի շուկայից, որը գտնվում է 15կմ հեռավորության վրա:

Համայնքի տարածքում տեղակայված չեն ճանապարհային երթևեկության նշաններ՝ չնայած համայնքում շահագործվում են 12 մարդատար և 5 բեռնատար մասնավոր ավտոմեքենա:

> ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայմայնքում հիմնական արդյունաբերական ձեռնարկություններ, արյունաբերական արտադրանք և հիմնական շուկաներ չկան: Ինչպես նաև չկան ծառայություններ մատուցող ձեռնարկություններ և առևտրի կետեր:

> ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է հիմնական դպրոց, որտեղ սովորում են 27 աշակերտ: Համայնքից աստիճանական արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազում է: Դպրոցում աշխատում են 9 աշխատող, որոնցից 9-ը մանկավարժ են: Դպրոցի շենքը վերանորոգված չէ և ներկայում գտնվում է անմխիթար վիճակում: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է դիզ վառելիքով, Դպրոցի շենքը ներկայումս կարիք ունի վերանորոգման, ներքին հարդարման, դռների և պատուհանների փոխարինման:

> ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում և այդ անմխիթար շինության մեջ այժմ տեղակայված է գյուղապետերանը: Ներկայումս մշակութային կյանքը համայնքում անբավարար վիճակում է: Մշակույթի տան տարածքում տեղակայված է նաև համայնքի գրադարանը, որն ունի մոտ 1200 կտոր գիրք: Գրադարանավարի աշխատանքն իրականացվում է համայնքի աշխատակազմի գյուղմասվարի կողմից: Մշակույթի տան բացակայությունն իր բացասական ազդեցությունն է թողնում նաև երիտասարդների հետ

տարվող աշխատանքներում և մշակույթի տան նոր շենքի կառուցումն համարում ենք խիստ անհրաժեշտ, և այս հարցում ակնկալվում է ՀՀ կառավարության աջակցությունը:

> ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ, ՄՈՈՐՏ

Համայնքում չկա բուժկետ: Համայնքի հիմնական դպրոցում բացակայում է մարզադահլիճը, ինչպես նաև խաղահրապարակը:

> ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնք չունի նաև զբոսայգիներ, խաղահրապարակներ և բակային տարածքներ:

> ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 67 աշխատունակ մարդիկ, որոնցից աշխատանքով զբաղված են 12-ը, մնացած 55-ն աշխատանք չունեն, սակայն վերջիններից և ոչ մեկը գրանցված չի Թալինի տարածաշրջանային զբաղվածության կենտրոնում որպես գործազուրկներ, քանի որ համայնքի բնակիչները հիմնականում հողերի սեփականատերեր են և, ՀՀ օրենսդրության համաձայն, չեն կարող համարվել գործազուրկ:

Համայնքի մոտ 220 ընտանիքներից 2-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում:

> ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը մինչև հիմա տարերային բնույթ է կրել, ներկայումս այն սաղմնային վիճակում է: Չնայած համայնքի ՏԻՄ-երի շահագրգռվածությանը և պատրաստակամությանը, նրանք առայժմ չունեն որևէ համագործակցություն աղետների ռիսկի նվազեցման մարզային համապատասխան մարմինների հետ: Դա է պատճառը, որ համայնքում առայժմ չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների որևէ գնահատում, որի հիման վրա հնարավոր կլիներ պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, ՀՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 1)՝ ընդգրկելու համայնքի 2017-2021թթ. ՀՀԶԾ-ում:

Աղյուսակ 1. 2017-2021թթ. ՀՀԶԾ-ում ընդգրկելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը (հազ. դրամ)
1.	Համայնքի աշխատակազմի պահպանում	5148.0 (տարեկան)
2	Աղբահանության ծառայության մատուցման մեքենայի վարձակալություն	50.0 (տարեկան)
3.	Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ	60.0 (տարեկան)
4	Համայնքի աշխատակազմի համար տրանսպորտային միջոցի և համակարգչային սարքավորումների ձեռքբերում	3834.0

5	Համայնքային նոր կենտրոնի կառուցում	20000.0
6.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում	1000.0
7	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում	3500.0
8	Համայնքի մշակույթի տան շենքի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում և ջեռուցում	6000.0

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, ՀՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովի կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- հանրության աջակցությունը,
- ազդեցությունը արտագաղթի կանխման վրա,
- համայնքի կարողությունների հզորացում,
- բնակչության սոցիալական պայմանների բարելավում:

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ որոշվել են վերևում առաջարկված համայնքային ծրագրերի առաջնահերթությունները (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Համայնքային ծրագրերի առաջնահերթությունների որոշումը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավ. արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բայ)					Ծրագրի առաջնահերթությունը
			Հանրության աջակցությունը	Ազդեցությունը արտագաղթի կանխման վրա	Համայնքի կարողությունների հզորացում	Բնակչության սոցիալական պայմանների բարելավում	Ընդամենը (բայ)	
1.	Համայնքի աշխատակազմի պահպանում	5148.0 (տարեկան)	X	X	X	X	X	1
2	Աղբահանության ծառայության մատուցման մեքենայի վարձակալություն	50.0 (տարեկան)	X	X	X	X	X	3
3.	Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ	60.0 (տարեկան)	X	X	X	X	X	4
4	Համայնքի աշխատակազմի համար տրանսպորտային միջոցի և համակարգչային սարքավորումների ձեռքբերում	3834.0 (միանվագ)	X	X	X	X	X	5
5	Համայնքային նոր	20000.0	9	4	8	9	30	6

	կենտրոնի կառուցում							
6	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում	1000.0	8	4	7	8	27	7
7	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում	3500.0	7	3	4	4	18	8
8	Համայնքի մշակույթի տան ընթացիկ նորոգում, ներքին հարդարում և ջեռուցում	6000.0	5	1	7	6	19	9

Համայնքի աշխատակազմի պահպանման ծրագիրը նախկին տարիներին մշտապես իրականացվել է և առաջիկայում ևս նույնությամբ իրականացվելու է, այն համարվում է համայնքի ամենաառաջնահերթ ծրագիրը և ձևակերպվելու է համայնքի տարեկան բյուջեների շրջանակում համապատասխան ծախսային նախահաշվով, այդ պատճառով ՀՀԶԾ-ում դրաց առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Համայնքի սոցիալական աշխատողի պահպանման և բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ծրագիրն իրականացվում է համայնքի գյուղապետարանի և բնակչությանը սոցիալական ծառայությունների (երեխայի ծննդյան միանվագ օգնություն, ուսանողների ուսման վարձերի վճարում, սոցիալապես խոցելի ընտանիքներին միանվագ ֆինանսական և այլ օգնություն և այլն) մատուցման համար: Այս ծրագիրը ևս համայնքի առաջնահերթ ծրագրերից է, յուրաքանչյուր տարի կրկնվում է և ՀՀԶԾ-ում դրա առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Աղբահանության ծառայության մատուցման համար մասնավոր բեռնատար մեքենայի վարձակալության և արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ծրագրերը համարվում են յուրաքանչյուր տարի կրկնվող, նույն կերպ իրականացվող, և ՀՀԶԾ-ում դրանց առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Համայնքի աշխատակազմի համար տրանսպորտային միջոցի և համակարգչային սարքավորումների ձեռքբերման ծրագիրը համայնքի կարիքների համար անհրաժեշտ գույքի միանվագ գնման առաջնահերթ ծրագիր է, որի առանձին ձևակերպման անհրաժեշտությունը նորից չկա:

Համայնքի հիմնական դպրոցի շենքի ընթացիկ նորոգման, ներքին հարդարման և ջեռուցման ծրագիրը, որի առաջնահերթությունն առաջարկված ծրագրերի ցանկում ճանաչվել է 9-րդը, մշակվելու, հաստատվելու և իրականացվելու է ՀՀ պետական բյուջեի

շրջանակներում, այդ պատճառով ՀՀԶԾ-ում դրա, որպես հանրակրթության ոլորտային ծրագրի, ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Ստորև ներկայացվում են ՀՀԶԾ-ում ներառվող ոլորտային մնացած ծրագրերի ձևակերպումներն՝ ըստ ոլորտային ծրագրի օրինակելի ձևի:

2017-2021թթ ընթացքում համայնքի ՏԻՄ-ը նախատեսում է լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-2021թթ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատի, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով,
- համայնքային նոր կենտրոնի կառուցում և ջեռուցում, որի շահագործմամբ հնարավորություն կստեղծվի նոր տարածք տեղափոխել համայնքի գյուղապետարանը և գրադարանը՝ նոր մակարդակի բարձրացնելով այդ հիմնարկների գործունեությունը, համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,
- համայնքի հիմնական դպրոցի շենքի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում, դռների և պատուհանների փոխարինում, ջեռուցում՝ բարելավելով դպրոցական հանրակրթության որակը և ավելացնելով դպրոցում սովորողների թիվը,
- Աշտակակ-Թալին մայրուղուց մինչև համայնք ճանապարհի կապիտալ նորոգում, բարեկարգում և ասֆալտապատում՝ նպաստելով համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքները մինչև շուկա հասցնելուն և իրացնելուն,
- մարզկենտրոն Աշտարակի, տարածաշրջանային կենտրոն Թալին քաղաքի հետ մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում՝ համագործակցության ներգրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպությունների,
- առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում՝ պետական պատվերի շրջանակներում,
- աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2017-2021թթ. ընթացքում Հայաստանում ծրագրվող վարչատարածքային բարեփոխումների և/կամ միջհամայնքային համագործակցության շրջանակներում՝ նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- աղբավայրի կառուցում և շահագործում,
- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպում և մատուցում,
- Խմելու ջրի ջրամատակարարման ընդհանուր ջրագծի կառուցում, ներհամայնքային համակարգերի անցկացում և շահագործում,
- Թալին քաղաքի և մյուս բնակավայրերի միջև շուրջօրյա հասարակական տրանսպորտի ապահովում և շահագործում,
- այլ ծրագրեր և ծառայություններ:

2017-2021թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Արագածոտնի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները: Մասնավորապես, նախատեսվում է սերտ համագործակցություն համայնքի «Վորլդ Վիժն-Հայաստան» կազմակերպության Թալինի տարածաշրջանային գրասենյակի հետ՝ դպրոցական կրթության, առողջապահության, երեխաների սոցիալական պաշտպանության, մշակույթի և սպորտի, տեղական ժողովրդավարության և մասնակցության, մարդու իրավունքների, համայնքային զարգացման և այլ ոլորտներում:

Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

- Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի մաշվածության պատճառով համայնքում սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգը
- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը
- Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը, մասնավորապես՝ միջնակարգ դպրոցի հետագա լիարժեք գործունեությունը

2.4 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմերը

- ✓ Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային ռեսուրսների առկայությունը

Համայնքի թույլ կողմերը

- ✓ Համայնքում բացակայում է գյուղատնտեսական անհատական տնտեսություններին ոռոգման ջրի մատակարարումը:
- ✓ Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը:
- ✓ Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը:
- ✓ Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն տարածաշրջանի այլ համայնքների և մարզկենտրոնի հետ
- ✓ Համայնքում աղբահանության ծառայության բացակայությունը:
- ✓ Համայնքից տարեցտարի շարունակվող արտագաղթը՝ իր բոլոր բացասական հետևանքներով:
- ✓ Գյուղապետարանի շենք չունենալը և համայնքային կենտրոնի բացակայությունը
- ✓ Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի ոչ բավարար վիճակը
- ✓ Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը
- ✓ Համայնքում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգի բացակայությունը

Հնարավորություններ

- ✓ Համայնքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի և այլնի) զարգացմանը:
- ✓ Համայնքում ակտիվացնել առևտրային գործունեությունը, փոքր և միջին ձեռներեցությունը

Սպառնալիքներ

- ✓ Բնակչության անվճարունակությունը
- ✓ Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսական այդ ճյուղի զարգացումը:
- ✓ Համայնքի հիմնականում երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը:

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-2021թթ. նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- ✓ համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատի, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով,
- ✓ համայնքային նոր կենտրոնի կառուցում և ջեռուցում, որի շահագործմամբ հնարավորություն կստեղծվի նոր տարածք տեղափոխել համայնքի գյուղապետարանը և գրադարանը՝ նոր մակարդակի բարձրացնելով այդ հիմնարկների գործունեությունը, համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,
- ✓ համայնքի հիմնական դպրոցի շենքի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում, դռների և պատուհանների փոխարինում, ջեռուցում՝ բարելավելով դպրոցական հանրակրթության որակը և ավելացնելով դպրոցում սովորողների թիվը,
- ✓ Աշտակակ-Թալին մայրուղուց մինչև համայնք ճանապարհի կապիտալ նորոգում, բարեկարգում և ասֆալտապատում՝ նպաստելով համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքները մինչև շուկա հասցնելուն և իրացնելուն,
- ✓ մարզկենտրոն Աշտարակի, տարածաշրջանային կենտրոն Թալին քաղաքի հետ մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում՝ համագործակցության ներգրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպությունների,
- ✓ առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում՝ պետական պատվերի շրջանակներում,
- ✓ աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- ✓ համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առևտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում:
- ✓ Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում:
- ✓ Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, արտաքին լուսավորության համակարգերի անցկացում:
- ✓ Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ապահովում և որակի անշեղ բարձրացման միջոցով:

2017-2021թթ. ընթացքում Հայաստանում ծրագրվող վարչատարածքային բարեփոխումների և/կամ միջհամայնքային համագործակցության շրջանակներում² նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- աղբավայրի կառուցում և շահագործում,
- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպում և մատուցում:
- խմելու ջրի ջրամատակարարման ընդհանուր ջրագծի կառուցում, ներհամայնքային համակարգերի անցկացում և շահագործում,
- Թալին քաղաքի և մյուս բնակավայրերի միջև շուրջօրյա հասարակական տրանսպորտի ապահովում և շահագործում,
- այլ ծրագրեր և ծառայություններ:

2017-2021թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Արագածոտնի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները: Մասնավորապես, նախատեսվում է սերտ համագործակցություն համայնքի «Վորլդ Վիժն-Հայաստան» կազմակերպության Թալինի տարածաշրջանային գրասենյակի հետ՝ դպրոցական կրթության, առողջապահության, երեխաների սոցիալական պաշտպանության, մշակույթի և սպորտի, տեղական ժողովրդավարության և մասնակցության, մարդու իրավունքների, համայնքային զարգացման և այլ ոլորտներում:

Համայնքի զարգացման 2017-2021թթ հնգամյա ծրագրերի հիմնական նպատակներն են՝

- ✓ Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- ✓ Համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով:
- ✓ Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում:
- ✓ Հասարակական տրանսպորտի աշխատանքի կատարելագործում:
- ✓ Համայնքի նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ոլորտներում պայմանների ընդլայնում և բարելավում

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, ՀՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 3)՝ ընդգրկելու համայնքի 2017-21թթ. ՀՀԶԾ -ում:

Աղյուսակ 3. 2017-21թթ. ՀՀԶԾ -ում ընդգրկելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը (հազ. դրամ)
1.	Համայնքի աշխատակազմի պահպանում	5148.0 (տարեկան)
2	Աղբահանության ծառայության մատուցման մեքենայի վարձակալություն	50.0 (տարեկան)
3.	Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ	60.0 (տարեկան)
4	Համայնքի աշխատակազմի համար տրանսպորտային միջոցի և համակարգչային սարքավորումների ձեռքբերում	3834.0
5	Համայնքային նոր կենտրոնի կառուցում	20000.0
6.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում	1000.0
7	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում	3500.0
8	Համայնքի մշակույթի տան շենքի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում և ջեռուցում	6000.0

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, ՀՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովի կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- հանրության աջակցությունը,
- ազդեցությունը արտագաղթի կանխման վրա,
- համայնքի կարողությունների հզորացում,
- բնակչության սոցիալական պայմանների բարելավում:

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ որոշվել են վերևում առաջարկված համայնքային ծրագրերի առաջնահերթությունները (աղյուսակ 4):

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավ. արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բայ)					Ծրագրի առաջնահերթությունը
			Հանրության աջակցությունը	Ազդեցությունը արտագաղթի կանխման վրա	Համայնքի կարողությունների հզորացում	Բնակչության սոցիալական պայմանների բարելավում	Ընդամենը (բայ)	
1.	Համայնքի աշխատակազմի պահպանում	5148.0 (տարեկան)	X	X	X	X	X	1
2	Աղբահանության մատուցման մեքենայի վարձակալություն	50.0 (տարեկան)	X	X	X	X	X	3
3.	Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ	60.0 (տարեկան)	X	X	X	X	X	4
4	Համայնքի աշխատակազմի համար տրանսպորտային միջոցի և համակարգչային սարքավորումների ձեռքբերում	3834.0 (միանվագ)	X	X	X	X	X	5
5	Համայնքային նոր կենտրոնի կառուցում	20000.0	9	4	8	9	30	6
6	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում	1000.0	8	4	7	8	27	7
7	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացում	3500.0	7	3	4	4	18	8
8	Համայնքի մշակույթի տան ընթացիկ նորոգում, ներքին հարդարում և ջեռուցում	6000.0	5	1	7	6	19	9

Համայնքի աշխատակազմի պահպանման ծրագիրը նախկին տարիներին մշտապես իրականացվել է և առաջիկայում ևս նույնությամբ իրականացվելու է, այն համարվում է համայնքի ամենաառաջնահերթ ծրագիրը և ձևակերպվելու է համայնքի տարեկան բյուջեների շրջանակում համապատասխան ծախսային նախահաշվով, այդ պատճառով ՀՀԶԾ-ում դրաց առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Համայնքի սոցիալական աշխատողի պահպանման և բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ծրագիրն իրականացվում է համայնքի գյուղապետարանի և բնակչությանը սոցիալական ծառայությունների (երեխայի ծննդյան միանվագ օգնություն, ուսանողների ուսման վարձերի վճարում, սոցիալապես խոցելի ընտանիքներին միանվագ ֆինանսական և այլ օգնություն և այլն) մատուցման համար: Այս ծրագիրը ևս համայնքի առաջնահերթ ծրագրերից է, յուրաքանչյուր տարի կրկնվում է և ՀՀԶԾ -ում դրա առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Աղբահանության ծառայության մատուցման համար մասնավոր բեռնատար մեքենայի վարձակալության և արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ծրագրերը համարվում են յուրաքանչյուր տարի կրկնվող, նույն կերպ իրականացվող, և ՀՀԶԾ -ում դրանց առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Համայնքի աշխատակազմի համար տրանսպորտային միջոցի և համակարգչային սարքավորումների ձեռքբերման ծրագիրը համայնքի կարիքների համար անհրաժեշտ գույքի միանվագ գնման առաջնահերթ ծրագիր է, որի առանձին ձևակերպման անհրաժեշտությունը նորից չկա:

Համայնքի հիմնական դպրոցի շենքի ընթացիկ նորոգման, ներքին հարդարման և ջեռուցման ծրագիրը, որի առաջնահերթությունն առաջարկված ծրագրերի ցանկում ճանաչվել է 9-րդը, մշակվելու, հաստատվելու և իրականացվելու է ՀՀ պետական բյուջեի շրջանակներում, այդ պատճառով ՀՀԶԾ -ում դրա, որպես հանրակրթության ոլորտային ծրագրի, ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Ստորև ներկայացվում են ՀՀԶԾ -ում ներառվող ոլորտային մնացած ծրագրերի ձևակերպումներն՝ ըստ ոլորտային ծրագրի օրինակելի ձևի:

Ծրագիր 5

Տնտեսական հարաբերություններ. քաղաքաշինություն

(Ոլորտի անվանումը)

Համայնքային նոր կենտրոնի կառուցում

(Ծրագրի անվանումը)

Սորիկ համայնքի գյուղապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 20,000.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

Ծառայությունների մատուցում Սպասարկում Ընթացիկ աշխատանքներ

Ծրագրի հիմնավորումը

Համայնքի գյուղապետարանը, չունենալով շենք, ժամանակավորապես տեղակայված են համայնքի մշակույթի անմխիթար շենքում, որի պայմանները չեն համապատասխանում նշված հիմնարկների գործունեության բնույթին և պահանջներին: Համայնքում անհրաժեշտ է կառուցել համայնքային նոր կենտրոն, որտեղ հնարավոր կլինի տեղափոխել գյուղապետարանը և գրադարանը, ինչպես նաև ստեղծել մշակութային տարբեր խմբեր ու խմբակներ, կազմակերպել և անցկացնել հասարակական և մշակութային տարբեր բնույթի հանրային ծառայություններ ու միջոցառումներ:

Ծրագրի նպատակները

Բարձրացնել համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակը, համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, աշխուժացնել համայնքի հասարակական և մշակութային կյանքը:

Ծրագրի խնդիրները

1. Ձեռք բերել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի միջնորդությունը և ՀՀ կառավարության համաձայնությունը՝ ծրագիրը ներառելու ՀՀ 2018թ. պետական բյուջեի նախագծում:
2. Համայնքի կողմից պատվիրել և ստանալ համայնքային նոր կենտրոնի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
3. Համայնքի ավագանու կողմից կայացնել որոշում հողհատկացման մասին՝ համայնքային նոր կենտրոն կառուցելու համար:
4. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից կազմակերպել մրցույթ՝ համայնքային կենտրոնի կառուցման շինարարական կազմակերպությունն ընտրելու համար:
5. Վերահսկել համայնքային նոր կենտրոնի կառուցումը և հանձնումը համայնքի հաշվեկշռին:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2017թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Ծրագիրը ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի քննարկմանը և հավանությանը												
